ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորական ուղերձն Ամանորի և Սուրբծննդյան տոների առթիվ

31.12.2022

Հարգելի՛ հայրենակիցներ,

ընդունե՛ք իմ անկեղծ շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն Ամանորի և Սուրբծննդյան տոների առթիվ:

Ամեն անգամ տարեմուտին մենք ամփոփում ենք մեր մտքերն ու զգացումները, վերհիշում մեր կատարած աշխատանքները, վեր հանում մեր առջև ծառացած խոչընդոտներն ու դրանց պատճառները և ամեն անգամ ավելի ենք գիտակցում, որ դեռ շատ անելիքներ ունենք:

Թեև 2022 թվականը լի էր փորձություններով, արտաքին և ներքին մարտահրավերների բացասական ազդեցություններով, այնուամենայնիվ ռեսուրսների և ջանքերի կենտրոնացմամբ մենք կարողացանք դիմակայել դժվարություններին և Արմավիրի մարզում ապահովել զարգացման և բարեկարգման բուռն գործընթաց:

Այն աննախադեպ էր իր ծրագրերի քանակով, ծավալով, իրականացրած շինարարական աշխատանքներով: Այս ամենը լինելու է շարունակական գործընթաց, քանի որ բոլորս մեկ նպատակ ունենք՝ տեսնել մեր երկիրը տնտեսապես զարգացած, հզոր, անվտանգ և խաղաղ:

Վստահ եմ՝ մեր միասնականությամբ ու հավաքական ուժի շնորհիվ մենք շարունակելու ենք հանդուրժողականության և փոխվստահության մթնոլորտում համատեղ քայլերով առաջ շարժվել՝ կառուցելով ու շենացնելով Հայաստանը՝ հանուն մեր պետականության ամրապնդման և անկախության հարատևման:

Ցավով պետք է նշեմ, որ այս ճանապարհին մենք դեռ շատ անելիքներ ունենք: Արցախում այս պահին 120 հազարից ավել քաղաքացի ամբողջական շրջափակման մեջ է: Նրանք շարունակում են կենաց-մահու պայքար մղել՝ հանուն ապրելու իրավունքի, հանուն գոյատևման և ինքնության պահպանման:

Այսօր մենք ունենք կարևոր առաքելություն՝ կանգնել արցախցու, Արցախի մեր հայրենակիցների կողքին:

Ի վերջո, մեր երկրի ու միմյանց հանդեպ ունեցած սրտացավությունը, սերն ու ջերմությունը մեզ կբավականացնեն՝ հասնելու համազգային, ընտանեկան ու անձնական նպատակներին:

Սիրելի՛ հայրենակիցներ, կրկին շնորհավորում եմ բոլորիդ Հայաստանում, Արցախում և Սփյուռքում՝ մաղթելով խաղաղություն, առողջություն ու բարօրություն:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ: